589. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Հոգևոր հարք և եղբարք, զՍողոմոն երայց (երէց), կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք աղաչեմ. ամէն:

Հրատ. Բարխուդարեանց, 90—91։

Հին Ներքին Թաղավարդ

590. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հարավային (առաջինը բեմի կողմից) որմնամույթի ստորին մասում երկու մետրաչափ մի երեսպատման քարի վրա խաչ և տակին 3 տող.

ԱՅՍ Է ՍԲ ԽԱՉՍ ԴԱՒՈՒԹԻՆ ԹՎ ՌԾԷ	ԱՅՍ Է ՍԲ. ԽԱՉՍ| ԴԱՒՈՒԹԻՆ|. ԹՎ. :ՌԾԷ: (1608):

591. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, ներքուստ, բեմի մոտ, մի երեսպատման քարի վրա, 2 տող.

ԹՎԻՆ ՌՂԴ	ԹՎԻՆ| :ՌՂԴ: (1645):

592. ԽԱՉՔԱՐ, ագուցված է նախորդ արձանագրությունից ներքև, վրան՝ թերի 2 տող.

. . . ՄԱՐՏԻՐՈՍԿԱՆԿՆԵՑԻԽՆՉՓՐԿ . . . ԹԻԱԿՆ	[ԵՍ] ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ Խ(Ա)Չ(Ա)Ս ՓՐԿ[ՈՒԹԵԱՆ . . . .| ԹԻԱԿԱ- Ն[ԻՆ . . . . .

593. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի մոտ, մի քարի վրա եղել է.

Ես անարժան Գրիգորս երեցի Թաղավարդու եկեղեցին. առաջնորդութիւն Տաւութին որդին, նոր Պապասին, Ամիրպէկին. այնպէս սէրուն էր, որ գիշերն քուն չկէ:

Հրատ. Բարխուդարեանց, 89։

55. ՇԵԽԵՐ ԳՑՈՒԴ

594. ՄԱՏՈՒՌԻ ՎՐԱ, որը գտնվում է գյուղի հարավային բլրի վրա.

թվին ՌԾԲ: (1603):

Հրատ. Բարխուդարեանց, 87։

56. ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔ

Արցախի այս հնագույն և նշանավոր վանքի հիմնարկությունը ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, իսկ ավարտումը և օծումը՝ նրա թոռ, Աղվանից առաքյալ Գրիգորիսին։ Վերջինիս նահատակումից հետո նրա աշակերտները Գրիգորիսի աճյունը թաղում են հենց այս վանքում։

Մեկուկես հազարամյակի անցյալ ունեցող այս վանքը ականատես է եղել պատմական խոշոր իրադարձությունների, ունեցել է իր ծաղկման շրջանը, երբ այնտեղ են նստել Աղվանից կաթողիկոսները, կրել է նաև աղետներ ու ավերածություններ և հետագայում մնացել անմարդաբնակ։

Բազմաթիվ վերանորոգումներից հետո վանքը գրեթե հիմնովին վերակառուցվել է XIX դարում, և այդ նոր տեսքով կանգուն է այժմ, շրջապատված բարձր և բրգավոր պարիսպներով, որոնք շինել է Վարանդալի մելիք Շահնազարը։

Միակ հնությունը այդ վանքից Գրիգորիսի ստորերկրյա դամբարանն է, որը գտնվում է ներկա եկեղեցու բեմի տակ։

Հին արձանագրություններ նույնպես չգտանք այստեղ. Ստեփանակերտի Դավառագիտական թանգարանում պահպանվում է սպիտակավուն խաչքարի մի բեկոր՝ բոլոր կողմերից ջարդոտված և արձանագրության մնացորդներով, որը տարվել է Ամարասի վանքից. ահա այդ խաչքարի արձանագրության գծագիր պատկերը.

595.



Ծանոթ. Բովանդակությունից պարզ է, որ խաչքարը կանգնեցվել է 6ՀԴ—92ա թվականին, երիտասարդ հասակում օտար աշխարհում մեռածի հիշատակին։